ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար պիլոտային /փորձնական/ ծրագրով ցանցային, համացանցային և ներքին ծառայողական կայքի (ինտրանետի) համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-17/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի /հայտի գնահատման արդյունքների հաստատման նիստի/

ք. Երևան

«14» սեպտեմբերի 2017թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Եղիազարյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության պետ,

հանձնաժողովի անդամներ՝

Խորեն Պետրոսյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

Արթուր Թամրազյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

Գրիգոր Գաբրիելյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/ՄԻՄ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

Նիստից բացակայում էր՝

Սարգիս Արմենակյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:

1. Տեղեկատվություն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում շտկելու վերաբերյալ.

«Մեգապոլիս Լաբ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց «Մեգապոլիս Լաբ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց՝

-ընթացակարգը հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին):

-հաստատել «ԴԴ-ԳՀԾՁԲ-17/01» ծածկագրով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը (կցվում է):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Արթուր Եղիազարյան

Անդամներ՝ Խորեն Պետրոսյան

Արթուր Թամրազյան

Գրիգոր Գաբրիելյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին

Ընթացակարգի ծածկագիրը **«ԴԴ-ԳՀԾՁԲ-17/01»**

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն ստորև ներկայացնում է իր կարիքների համար պիլոտային /փորձնական/ ծրագրով ցանցային, համացանցային և ներքին ծառայողական կայքի (ինտրանետի) համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-17/01» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին տեղեկատվությունը՝

Չափաբաժնի համար	**Գնման առարկայի համառոտ նկարագրություն**	**Գնման ընթացակարգի մասնակիցների անվանումները՝այդպիսիք լինելու դեպքում**	**Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվել համաձայն՝"Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի** /ընդգծել համապատասխան տողը/	**Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմնավորման վերաբերյալ համառոտ տեղեկատվություն**
1	Պիլոտային /փորձնական/ ծրագրով ցանցային, համացանցային և ներքին ծառայողական կայքի (ինտրանետի) համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայություններ	«Մեգապոլիս Լաբ» ՍՊԸ, «Մեյսիս Ինֆորմեյշն Սիսթեմս» ՍՊԸ	1-ին կետի 2-րդ կետի 3-րդ կետի 4-րդ կետի	«Մեյսիս Ինֆորմեյշն Սիսթեմս» ՍՊԸ-ի հայտը ներժվել է՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 32-րդ կետի 12-րդ ենթակետով, 40-րդ կետի 4-րդ ենթակետով, 41-րդ կետով, «Մեգապոլիս Լաբ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է՝ ղեկավարվելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետով

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԳՀԾՁԲ-17/01» ծածկագրով գնումների համակարգող Արուս Խաչատրյանին:

Հեռախոս՝ **010-511-787**:

Էլեկտրանային փոստ՝ **ddgnumner@mail.ru**:

Պատվիրատու՝ **«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ**: